

ցան: Չորս կողմէն եկող զիւղանցիները հեազհեաէ կը խուժեն անպաշտպան կիներու վրայ, իրենց կացիները, մերկացուցած սուրերը այս ու այն կողմ շարժելով՝ որուն հանդիպողը անկենդան դեպին կ'իջնար: Այս ձորը Ալպիտաանէն դէպի Այնթապ 15 ժամ էր: Գնդակներու տարափէն շատեր կ'իջնային արդէն... մանուկը կը տեսնէր մայրը դեպին փոռած՝ դուրսը երկուքի բաժնուած կացինի հարուածին տակ... մայրը կը տեսնէր իր փոքրիկը քիւրտերու սուրներուն վրայ, որ «մայրիկ» կ'ըսէ ու կը մեռնի:

Կիներէն շատեր կը փախչին ձգելով իրենց զաւակները: Մանուկները «մայրիկ» կը պռռային բայց մայրը չէր կրնար դառնալ: Այս զարհուրելի աղաքակները լեռներն ու ձորերը կը թնդացնէին, իսկ խուժանը դեռ իր վայրագուած մանուկները մորթել կու տային իրենց մօր ձեռքով, ոմանց մի քանի անդամները կտրելով հոն կը ձգէին որ շուտ չմեռնի: Աղջիկները, կիները առեւանգել եւ անոնց հետ ինչ ձեռով փարուելնին մարդ տրարածը չի կրնար երեւակայել եւ խօսիլ: Այս բարբարոսային ձեւերով կողոպտելէ՝ կիներն ու աղջիկները մերկացնելէ յետոյ, իրենց հետ առնելով աւարը, հաւնած աղջիկներն ու կիները կը տանին հետերնին: Գայմազամը եւ պաշտօնեաները դեռ կը դիտեն հոն շնահանօրէն: Այլ խուժանին երթալէն ետք, մնացորդ գաղթականներու կ'ընկերանան նորէն այդ նոյն գայմազամն եւ իր պաշտօնեաները եւ 4-5 ժամ ճամբայ երթալէն յետոյ, հոն դեպի մը եղբրքը դիշերել կու տան. կէսը հաղիւ կը հասնի հոն, տեղ մը՝ ուր անկողինի տեղ քար կայ, հացի տեղ՝ խոտ: Հետեւալ օրը անօթի ծարաւ կը քալեցնեն, մէկ մասը՝ որ այդ կտորածէն ազատած էր, անոնք ալ անօթութենէն կը մեռնին: Գայմազամը արդէն երկրորդ զատած էր, անոնք ալ անօթութենէն կը մեռնին: Գայմազամը արդէն երկրորդ օրն իսկ դարձեր էր, իր պաշտօնեաներով, բաժնելու համար քիւրտերու առած ուարը: Կիւրիներն Այնթապ՝ որ 8 օրուան ճամբայ է, այդ խեղճ կիները ճիշդ ամիս մը կը քալին շարշարուելով. անոնցմէ քառորդը հազիւ Այնթապ հասած է: Այս ձեռով բոլոր խումբ խումբ եկող հայ կիները ու պատանիները շարժուածով, անունդի պակասով, սուրով մեռած են, ճամբաներու վրայ, լեռներու եզերքը, ժայռերու տակ: Շատ քիչեր հասած են Այնթապ, ապա՝ Հալէպ:

«Նուպարեան Մատենադարանի» ձեռագիրներէն

ԵՂԻԱ ԽՐԸՏԵԱՆ

4.— ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԹՈՒՐԳԻՈՑ ՄԷՋ ՄԱՀԱՑԱԾ ԳԵՐՄԱՆԱՑԻՒ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ (*)

1915 թուականի Յուլիս 28-Օգոստոս 20 ճանապարհորդութիւն մը կատարեցի դէպի Մարաշ: Քիլիսի եւ Այնթապի միջեւ գտնուող Պէշկէօղ զիւղի բնակիչներուն խօսակցութեան նիւթը այն էր, որ հայերու տեղահանումը Այնթապէն ալ պիտի սկսէր յաջորդ օրը: Քիչ մը ետք, լաւ հազուած մարդ մը, որ չերթէզ կը կարծուէր ըլլալ, մասամբ Միւֆթիի եւ մասամբ սպայի համազգեստ հագած ըլլալուն համար, մօտեցաւ ժողովուրդին եւ հարցուց — «Քաղաքին ո՞ր շրջանէն կը հեռացուի ժողովուրդը. ո՞ր ճամբով կ'երթան եւ ի՞նչ տեսակ մարդիկ են անոնք, բանով մը կրնանք օգտուել անոնցմէ»: Ներկաներէն մէկը երբ իրեն հարցուց թէ ինք քաղաքային մարդ էր թէ գիւնուորական, ան ժրջուելով ըսաւ — «Ձինուոր ըլլալու աւելի սքանչելի առի՞թ կայ, եթէ ոչ հիմա»:

(*) «Գեորգիանի, Թուրքիա եւ Հայաստան» գիրքէն, տպ. Լամոն, 1917:

Ու նոյն անձը աւելցուց .— «Այս անգամ Գերմանիա այս խոզերուն տուաւ այնպիսի դաւ մը գոր բնաւ պիտի չմոռնան» :

Այս խօսքը լսելով եւ ստիպուեցայ պատասխանել, թէ լսուած դէպքերուն կապակցութեամբ Գերմանիոյ անունը յիշելը համազօր էր զայն թաղելուն : Վերադարձիս լսեցի որ Այնթապէն առաջին կարաւանները, որոնք դրեթէ բացառապէս ունեւորներէ կը բաղկանային, իրենց մինչեւ վերջին շապիկը կողոպտուած էին : Տարբեր ազբիւրներէ տեղեկացայ, որ կառավարական իշխանութիւնները անտեսութեան մատնած էին եղելութիւնները . եւ վերսյիշեալ խնդրոյ առարկայ անձը առնչութիւն ունեցած է անոնց հետ : Քարապէտյիւքի մէջ, որ Այնթապի եւ Մարաշի միջեւ կը գտնուէի, հանդիպեցայ հայերու խումբի մը, որ կը բաղկանար մօտ քառասուն կիներէ ու երեխաներէ եւ հինգ կամ վեց այրերէ : Անոնց առջեւէն, մօտ 180 եարտ հեռաւորութեան մը վրայ կը քալէին 100 դինախօշիկներ : Կանանց մէջ կար երիտասարդ ուսուցչուհի մը, որ քանի մը տարիէ ի վեր դերմանացիներու մօտ կը պաշտօնավարէր : Ան հազիւ ապաքինած է սուր ժամատակնդէ : Զինուորները պահանջեցին որ ան եւ ուրիշ երիտասարդ կիներ մը, որուն ամուսինը ներկայիս դինուորական ծառայութեան մէջ է Դամասկոսի մէջ, դիշերը իրենց հետ անցընեն եւ բռնի ուժի դիմեցին : Կանանց օգնութեան հասնող մահմետական ջորեպաններու շնորհիւ միայն դինուորները իրենց կատարած յարձակումներէն ետ մղուեցան :

Օգոստոս 6ին, Մարաշի մօտ դանուող Թընտրճաք հայկական զիւղը, որ մօտ 3000 բնակիչ կը հաշուէր, քարուքանդ եղաւ : Բնակչութիւնը, որ մեծ մասով ջորեպաններէ կը բաղկանար, նախորդող երեք ամիսներու ընթացքին հարկադրանքի տակ հայեր փոխադրած էր յաճախ դէպի Եփրատ : Անոնք տեսած էին դիտիներ Եփրատի մէջ եւ իրենց սեփական աչքերով դիտած կանանց ու աղջիկներու վաճառումն ու բռնաբարումը :

Մարաշի հայկական մէկ զպրոցին մէջ տեսայ իրենց սրունքներէն ու թեւերն փամփուշտով վիրաւորուած ու ամէն տեսակի խեղումներու ենթարկուած աւելի քան հարիւր կանայք ու երեխաներ : Անոնք մէջ կային մէկ-երկու տարեկան երեխաներ :

Օգոստոս 13ին, 34 հայեր, որոնցմէ երկուքը տասներկու տարեկան տղաներ, զնդակահարուեցան Մարաշի մէջ : Նոյնպէս Օգոստոս 15ին, 24 հոգի գընդակահարուեցան եւ 14 հոգի ալ կախուեցան : 24 զնդակահարուողները իրենց վիզերէն անցնող ծանր շղթայով մը իրարու կապուեցան եւ մէկ մարդու նման ոտքի հանուեցան : Անոնք զնդակահարուեցան ամերիկեան դոլիճի ետին, տեղական բնակչութեան ներկայութեան : Իմ սեփական աչքերով տեսայ որ տակաւին մահուան ցաւերէն ցնցուող մարմինները կը թողուէին ժպտութեանը քաղաքային այլանդակ ամբոխին, որ կը քաջքէր դիտիներու ձեռքերն ու ոտքերը : Յաջորդ կէս ժամուան ընթացքին, սատիկաններ ու ժանտարժներ ատրուանակներով շարունակ կը կրակէին այս դիակներուն վրայ, որոնցմէ ոմանք սոսկալիօրէն ձեւափոխուած էին, մինչ ժողովուրդը կը դիտէր հրճուանքով : Աւելի ուշ, նոյն ժողովուրդը տողանցեց գերմանական հիւանդանոցին առջեւէն եւ բացադանչեց . «Եաշասըն Ալմանիա» (կեցցէ Գերմանի) : Մահմետականներ ինձի միշտ կ'ըսէին, որ Գերմանիան է պատճառը հայերու այս կերպ անճիտումին :

Քաղաքէն դիւղ դացած ժամանակ, քաղաքի ծայրամասին, աղբակոյտի մը վրայ տեսայ մարդկային դուլի մը, որ թուրք ազաներու կողմէ իրրեւ թիրախ կը դորձածուէր : Մարաշի մէջ իմ բնակութեան ընթացքին, հայեր ամէն

որ կը սպաննուէին քաղաքային բնակչութեան կողմէ, եւ դիակները օրերով կը մնային բաց կոյուղանցներուն մէջ կամ այլուր :

Մարաշի մէջ Գատիւր փաշան ինծի ըսաւ. — «Գիտեմ, որ կառավարութեան մէկ հրամանին որպէս հետեւանք, հրդ բանակի շրջանի բոլոր այդ մարդիկը սպաննուեցան» :

1915 թուականի Օգոստոս 20ին (Ուրբաթ օր), երեկոյեան ժամը վեցին, Մարաշի մէջ ծանուցուեցաւ, որ Ատանայի վալիին հրամանին համաձայն, 15 տարեկանէն վեր բոլոր այդ մարդիկը (թիւով 5600 հոգի) պէտք է հաւաքուին քաղաքէն դուրս, Ծարաթ կէտօրին շարժելու համար : Եթէ ժամը 12էն ետք քաղաքին մէջ անոնցմէ որեւէ մէկը գտնուէր, տեղն ու տեղը պիտի սպաննուէր : Ամէն ոք դիտէր այս հրամանին նշանակութիւնը, եւ սարսափելի ժամեր ապրեցանք այդ օրը : Վերջին վայրկեանին, շնորհիւ Մարաշի շատ ազնիւ կառավարիչին միջամտութեան, վալիին հրամանը բարեփոխութեան ենթարկուեցաւ այնքանով որ այրերուն կը թոյլատրուէր շարժիլ իրենց ընտանիքներով : Դեռ Օգոստոս 18ին էր որ վալիին կրօնական իշխանութեանց հաւաստիացուցած էր, որ Մարաշի հայերը պիտի չտեղահանուին : Այսպէս, քաղաքէն դուրս եկողը ստիպուած էր մեկնիլ առանց որեւէ նախապատրաստութեան :

Ալախատանի մօտ գտնուող Պէօլերէն դիւղի բոլոր հայ բնակիչները, թիւով 82 հոգի, ի բաց առեալ տասներկու տարեկան աղայէ մը, որ ջուրը ջատկեց ու փախաւ, սպաննուեցան :


Զէյթունի շրջակայքը ծաղկախոտէ վարակուած գիւղի մը բնակիչները տեղահան եղան : Մաղիախոտէ տառապող հիւանդները, որոնց մէջ կային հիւանդութեան պատճառով աչքի լոյսը կորսնցնողներ, իջան Մարաշի խաները (պանդոկները), ուր արդէն իջեւանած էին ուրիշ շրջաններէ տեղահանուածներ :

Մարաշի մէջ տեսայ հարիւր անձերէ բաղկացած կարաւան մը, որուն մէջ քանի մը կոյրեր կային : 60 տարեկան մայր մը կ'առաջնորդէր իր դուստրը, որ ծնունդով կաղ էր : Անոնք իրենց ճանապարհորդութեան սկսան հետիոտն : Մէկ ժամ ետք էրքեսէն կամուրջին մօտ մարդ մը ինկաւ գետին : Անմիջապէս կողոպտեցին զայն եւ սպաննեցին : Չորս օր ետք տեսանք որ անոր դիակը տակաւին ցեխերու մէջ պառկած կը մնար :

Երէկ դիշեր այցելեցի ծանօթի մը : Ան հիւրընկալած էր մայր մը եւ իր երեխան, որոնք Մվազէն տեղահանուած էին եւ վերապրող անձերն էին 26 հոգիէ բաղկացած այն ընտանիքին, որ երեք ամիս առաջ տեղահան եղած էր Սըվազէն եւ միայն քանի մը օր առաջ Մարաշ հասած :

Այնթապի մէջ տեսայ կառավարիչին մէկ զբաւոր հրամանը, որ մահմետական բնակչութեան կարգիչներ տեղահանուած հայերուն իրերը գնել : Նոյն կառավարիչը կազմակերպեց արշաւ մը տեղահանուածներուն վրայ : Երկու կարաւաններ ամբողջութեամբ թաւանուեցան :

Կիւրինէն տեղահանուած մօտ 2800 անձեր Այրան Փունարի մէջ (Մարաշէն 12 ժամ դէպի հիւսիս-արեւելք) յարձակումի ենթարկուեցան ու կոտորուեցան ութ աւազակներու կողմէ, որոնք համազգեստներ կը կրէին, մասամբ վրնուորական ու մասամբ դադանի : Քըզըլ Կեչիտի մէջ, որ 1.5 ժամ հեռու է Այրան Փունարէն, ութ աւազակներուն միացան կարաւանը առաջնորդող ժանտարմները եւ երկնր խօսակցութիւն մը ունեցան անոնց հետ : Այրան Փունարի մէջ ժանտարմները ժողովուրդին հրամայեցին երկու խումբի բաժնուիլ : Մէկ



խումբը կը կազմէին կանայք: Կինները մերկացուցան եւ կողոպտուեցան: Գիշերը չորս կանայք եւ երկու ազջիկներ հեռացուցան ու բռնարարուեցան: Անոնցմէ հինգը վերադարձաւ յաջորդ ատու: Ինկիսէք Տաղբի մէկ կիրճին մէջ թուրքեր ու քիւրտեր թալանեցին ածրող կարուանը: Այս յարձակումին ընթացքին սպաննուեցան 200 հոգի: 70 ծանր վիրաւորներ ետին ձուլուեցան եւ աւելի քան յիսուն ուրիշներ տարուեցան կարուանին հետ: Ես յետոյ, Քարապէօրուքի մէջ հանդիպեցայ կարուանին, որ 2500 հոգիէ կը բաղկանար: Մարդիկ թշուառութեան աննկարագրելի վիճակի մը մատնուած էին: Քարապէօրուքէն մէկ ժամ հետո, երկու մարդիկ պառկած էին ճամբուն վրայ, մէկը՝ երկու, իսկ միւսը եօթը զանակի հարուածներով վիրաւորուած: Քիչ մը հետոն պառկած էին երկու ուժասպառ կանայք: Աւելի հետոն պառկած էին 4 կանայք, որոնցմէ մէկը 13 տարեկան ազջիկ մըն էր, թեւերուն մէջ ցնցոտիներով փաթթած երկու օրուան մանուկով մը: 60 տարեկան մարդ մը, որ ճամբուն վրայ պառկած էր մէկ մաս երկարութեամբ եւ երկու մաս լայնութեամբ իր վերջին պատճառով (դաշտնի հարուածով առաջացած), ինծի պատմեց թէ ինք Կիւրիւնէն ճամբայ ելած էր 13 անասուններով: Այրան Փունարի մէջ ըստր անասունները եւ իր ունեցած բոլոր սպրանքները իրմէ վերցուած էին, եւ ինք հետիտան ինքզինք քաշքշած էր մինչեւ Քարապէօրուքէն մօտ մէկ ժամ հետո գտնուող վայր մը, ուր այլեւ ուժասպառ եղած էր:

Այս մարդիկը, ըստին ալ լաւ պայմաններ ունէին: Իրենցմէ կողոպտուած անասունները, սպրանքները եւ զրամը կը գնահատուին 8000 թրքական ոսկի: Ուժասպառ պառկած էին ճամբուն վրայ, որուն երկու կողմը դիակները կը տեսնուէին: 2500 հոգիէ բաղկացած այս կարուանին մէջ հազիւ 30-40 այր կար: 15 տարեկանէն վեր բոլոր այր մարդիկ կանանց ներկայութեան հեռացուած էին եւ հաւանաբար սպաննուած: Այս հայերը նպատակաւոր կերպով կը փոխադրուէին ծուռ ու ժուռ ճամբաներէ եւ վտանգաւոր անցքերէ: Ուզիդ ճամբով անոնք Մարաշ պիտի հասնէին չորս օրէն, մինչդեռ մէկ ամիսէ աւելի գեռ ճամբան էին: Անոնք ստիպուած էին ճամբորդել առանց անասունի, առանց անկողնի եւ ուտելիքի: Անոնք օրական կը ստանային հացի բարակ շերտ մը, որ չէր գոհացներ իրենց անթուրթիւնը: Անոնցմէ 400ը (բողոքականներ) հասան Հալէպ եւ երկու կամ երեք հոգի կը մեռնէին ամէն օր:

Այրան Փունարի տասպատակութիւնը կատարուեցաւ Ալպիտանի դայմագամին մեղսակցութեամբ, որ անոնցմէ գանձեց 200 թրքական ոսկի եւ խոտացաւ ժողովուրդը ապահով Այնթապ հասցնել: Կիւրիւնի դայմագամը անոնցմէ գանձած էր 1020 թրքական ոսկի եւ նոյն ապահովութիւնները տուած: Տեսայ մարդ մը, որ ուրիշներու հետ միասին այս գումարը դայմագամին կը յանձնէր Կիւրիւնի ակումբի սենեակին մէջ: Այնթապի մերձակայքը, այս խումբին պատկանող քանի մը կիներ գիշերը բռնարարուեցան Այնթապի բնակիչներուն կողմէ: Այրան Փունարի տասպատակութեան ժամանակ, այր մարդիկ ծառերուն կապուեցան եւ ողջ ողջ այրուեցան: Մինչ Կիւրիւնի հայերը կը հետանային քաղաքէն, մուսուները քրիստոնեայ եկեղեցիներու երբէքներէն ազօթքներ կը կարդային: Ականաւես մը ինծի պատմեց Այրան Փունարի մէջ յափշտակուած աւարի մը առնչութեամբ երկու եղբայրներու միջեւ ծագած վէճի մը մասին: Անոնցմէ մէկը ըսեր է. «Ես այս չորս կտոր բեռին համար քառասուն կին մեռցուցած եմ»:

Մարաշի մէջ, Հանի անունով մահմետական մը, որը կը ճանչնայի տարիներէ ի վեր, հետեւեալ զէպըր պատմեց ինծի. «Նիսիպիւնի մէջ, ես ու

բայր միւս շորեպանները արգելափակուած էինք խանի մը մէջ: Չուռնուզէն եկած քանի մը երիտասարդ կիները զիշերը բռնարարուեցան կարաւանը առաջնորդող ժանտարմներուն եւ քաղաքայիներու կողմէն:

Այնթապի ոստիկանութեան կոմիսարի գրասենեակին մէջ մահմետական աղա մը իմ ներկայութեան ըսաւ հայու մը. «Այսինչ այնինչ վայրերուն մէջ նամակներ դոնուած են: Ի՞նչ յարարութիւններ ունիս դուն այս մարդուն հետ. քեզի քանի անգամ ըսած եմ որ մահմետական դառնաս, եթէ ինձի լսած ըլլայիր, պիտի խուսափած ըլլայիր այն բոլոր տհաճ բաներէն, որոնց ենթարկուած է ազգդ»:

Սարիուսթէն ու Սվազէն տեղահանուած 18,000 անձերէն 350ը հասան Հալէպ (կանայք եւ երեխաներ): Էրզրումէն տեղահանուած 1900 հոգիէն 11 հոգի միայն — հիւանդ տղայ մը, չորս աղջիկներ եւ վեց կանայք — հասան այդ քաղաքը: Կանանց ու աղջիկներու խումբ մը, երկաթուղու ուղղութեամբ ստիպուած էր 65 ժամ հետիտան երթալ Ռաս էլ Այնէն մինչեւ Հալէպ, հակառակ այն իրողութեան որ միեւնոյն ժամանակ երկաթուղու վայրաշարժները, որոնք զինուորներու փոխադրութեան համար օգտագործուած էին, կը վերադառնային պարապ: Մահմետական ճամբորդներ, որոնք այդ կողմերէն անցած էին, կը պատմեն թէ ճամբաները անանցանկի դարձած էին անթաղ մնացած բազմաթիւ դիակներու պատճառով, որոնց հոտը կը թունաւորէր օդը: Վերապրողներէն 100-120 հոգի Հալէպ մահացան ճամբորդութեան ժամանակ կրած շարշարանքներուն հետեւանքով: Սովահար կանայք եւ երեխաներ երբ Հալէպ հասան, վայրի դաղաններու նման թափուեցան ուտելիքի վրայ: Մնոնցմէ շատերուն մարտդական օրկանները դադրած էին գործելէ: Մէկ-երկու դալ լափելէ ետք, մէկ կողմ դրին դիւարը: Կառավարութիւնը կը հաստատէ, թէ տեղահանուածները ուտելիք կը ստանան, բայց վերոյիշեալ կարաւանի պարազային, որ Սարիուսթէն կու գար, երեք ամսուան մէջ միայն մէկ անգամ հացի բաշխում տեղի ունեցաւ:

Թարգմ. ՎԱՀԱՆ ԱՆՏՈՆԵԱՆ

5. — ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ 1915—1919 ՇՐՋԱՆԷՆ

Մօտ կէս դարէ աւելի անցեր է աքսորի եւ սպանդի այն օրերէն, բայց անոնք անջնջելի դրոշմ են դրեր գեոաթի թմ մտքին վրայ: Այդ ահաւոր դէպքերէն մէկ քանին, իրենց ընդհանրական բնոյթով՝ անհրաժեշտ է որ յանձնուին պատմութեան: Եւ ինչ որ կը գրուի հոս, հաւատացէք, ոչ թէ լսողաց, երկրորդական աղբիւրներէ քաղուած պատմութիւններ են, այլ իմ անձամբ տեսած, լսած եւ ապրած իրողութիւններն են:

**

Այդ իրիկուն, 1915ի Ապրիլ ամսուն, հայրս, Մանուկ Գասպարեան, կորսնցուցած էր իր սովորական գուարթ արամադրութիւնը, եւ ճաշի սեղանին շուրջ՝ յայտնի մտահոգութեամբ մը կը բացատրէր մօրս, Նազելիին, թէ ինչպիսի լուրջ վտանդ մը կը սպառնայ ամբողջ հայութեան: Այդ օրը՝ Առաջնորդարանին մէջ տեղի ունեցած ժողովին ներկայացուած էր թուրք բռնակալութեան հրամանը, որով կը պահանջուէր բոլոր հայերէն իրենց ամէն տեսա-